

# ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրութիւնը գիւրում են ուղղակի  
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամէն յեղուռով:

Յայտարարութիւնները համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ

## ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:—Ներքին  
տեսութիւնը, Նախկին վերին-Ազգութիւնը, Նա-  
խկին Ներքին-Ազգութիւնը, Ներքին լուրերը:—Ար-  
տաքին տեսութիւնը, Վերին տարեկանը, Նա-  
խկին Ֆրանսիայից: Նախկին Թիւրքիայից: Ար-  
տաքին լուրերը:—Վերին Ներքինները:—Յայ-  
տարարութիւնները:—Տեղեկացոյց:

## ԳԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԺԻՆ ԱՆՑՔԵՐԸ

Կոնգրէսը կայացնելու համար  
երկար ժամանակ եւրոպական շատ  
դիպլոմատներ աշխատում էին:  
Կոնգրէսը իրագործել, համոզել  
բոլոր պետութիւններին, որ ու-  
ղարկեն իրանց ներկայացուցիչնե-  
րին այդ քաղաքական դատաստա-  
նին ներկայ գտնվելու համար բա-  
ւական աշխատանք պահանջեց այն  
քաղաքագետներէն, որոնք կամե-  
նում էին կոնգրէսի հաւաքվելը:

Վերջապէս դիպլոմատիան յաղ-  
թեց, կոնգրէսը հաւաքվեցաւ, բայց  
այնու ամենայնիւ քաղաքական գոր-  
ծերի անորոշ դրութիւնը, որ այդ-  
քան փնտաւար է հասարակա-  
կան բարոյութեան բոլոր ճիւ-  
ղերի համար, դեռ ևս անփոփոխ է  
մնում: Կերկայ րօպէում ամենա-  
հարկաւորը այն է, որ բոլոր պե-  
տութիւնների հպատակները շու-  
տով իմանան ինչ հետեւանքի է  
հասնելու կոնգրէսը լինի այդ հե-  
տեւանքը խաղաղութիւն թէ պա-  
տերազմ:

Կոնգրէսը արդէն ունեցաւ մի  
քանի նիստեր, բայց հասարա-  
կութեանը յայտնի է թէ այդ  
նիստերի ժամանակ ի՞նչ տեսակ  
վիճարանութիւններ են եղել, որ  
դրանից նա կարողանար իր եղ-  
րակացութիւններն անել:

Բայն և երկու տարի սրանից  
առաջ մի և նոյն խնդրի համար  
Փարիզում կոնգրէս գումարվեցաւ:  
Հետաքրքիր է մի հայեացք ձգել  
անցեալի վրա, համեմատել նրան  
ներկայի հետ: Հետաքրքիր է իմա-  
նալ ինչ դրութեան մէջ ներկա-  
յացան կոնգրէսին գնաղան պե-  
տութիւններ, իսկ մեզ հայերիս  
համար աւելի հետաքրքիր է գի-  
տենալ թէ ինչպէս մասնակցեց  
կոնգրէսին ուստաց կառավարու-  
թիւնը քան և երկու տարի ա-

ռաջ և ինչպէս է մասնակցում  
այժմ:

Երազիրները այս հարցի առի-  
թով բաւական զբաղված են:

Բայն և երկու տարի առաջ  
եւրոպական քաղաքականութեանը  
գերակշռող պետութիւնը Ֆրան-  
սիան էր, որի կառավարչական  
ղեկը Նապոլէոն III կայսրի ձեռ-  
քին էր: Նապոլէոնը ինքը հե-  
տաքրքրված էր արեւելեան հար-  
ցով, որ Ֆրանսիայի քաղաքա-  
կանութիւնը բարձրացնում էր:  
Ֆրանսիան Ղրիմի պատերազմին  
յաղթող մասնակցողներից մէկն  
էր: Ռուսաստանը ներկայացաւ  
կոնգրէսին իբրեւ յաղթված կողմ  
և ստիպված էր ընդունել իր պա-  
տիւր և արժանաւորութիւնը վի-  
րաւորող պայմաններ:

Եւրոպական գործերի գրութիւնը  
փոխվել է: Բաղաքականութեան  
մէջ առաջին դեր խաղացող պե-  
տութիւնը Գերմանիան է, որի  
մայրաքաղաքի մէջ գումարվեցաւ  
կոնգրէսը: Գերմանիան արեւելեան  
հարցի մէջ ուղղակի շահեր չունի  
և դիտաւորութիւն չունի այդ  
հարցի համար «մի հասարակ գի-  
նուորի արին թափել»: Մինչ-  
դեռ քսան և երկու տարի առաջ  
Ռուսաստանը կոնգրէսին մաս-  
նակցեց իբրեւ յաղթված պետու-  
թիւն, այժմ նա ներկայանում է  
պետութիւնների առաջ յաղթու-  
թեան դափնիներով ծածկված:  
Նրա զօրքերը Կ. Պոլսի մօտ են  
կանգնած:

Հայց միթէ մեր ներկայացու-  
ցիչները, ասում են ուստ լրա-  
գիրները, պէտք է հիմնվեն արած  
յաղթութիւնների վրա, զէնքի  
վրա, որ իրանց քաղաքականու-  
թիւնը իրագործեն. ոչ նրանք  
պէտք է պնդեն մեր հաղթարւոր  
մարդկերանց արինի գնով ձեռք  
բերած իրաւունքի վրա: Եւրոպի  
յաղթող պետութիւն արտօնու-  
թիւններ, առաջին ձայն ունի և  
մենք նրա համար չը յաղթեցինք,  
որ Եւրոպան մեզ նոր շղթանե-  
րով կապեն:

Եւս խօսքերը ճշմարիտ հա-  
մակրելի խօսքեր են և այդպէս  
խօսել իրաւունք ունի այն փողո-

ւորը, որի կառավարութիւնը  
Ռուսաստանի կառավարութեան  
պէս ճշմարիտ նպատակ է դրել  
ճշկված ազգերի ազատութիւնը:

Վ. Տ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

25 մայիսի

Նրբ. Ազգութիւնը, գիւրում էք անդադրաւ զէպի  
արեւմուտը և անցնում քարքարոտ ու ծայրերով  
պատած ճանապարհները 8—9 վերտալափ գնա-  
լով ձեր առաջ պատկերանում Յիւն գիւղը, իր  
բարձր և գեղեցիկ դիրքով, բաւականին լաւ  
մշակված դաշտերով, գեղեցիկ պողոտաւ այդի-  
ներով, անկանոն ծուռ ու մուռ և ցեխով ու  
աղբով քիչ փողոցով և աներով, որոնց թիւը  
համարում է մինչև 140:

Յիւնեցիք ինչ գաղթականներ են, նրանք բա-  
ւականին քաջ և առողջակալ են:

Եթէ բնակչաց արտաքին ձեւին և հագուստնե-  
րին նայենք կը կարծենք թէ դրանք աղքատ  
են: Կան շատերը որ ունեն բաւականին կա-  
րողութիւն և պարագայում են վաճառականու-  
թեամբ Կովկասի զանազան քաղաքներում: Յիւ-  
նեցիները մեծ մասը պարագայում է հողագործու-  
թեամբ:

Յիւնեցիք ապրում են ինչ նահապետական ձևով,  
հազիւ թէ արեւելքի միտա բարե և ասում նրանց  
և ծածկվում սարի յետե, նրանք փակվում են  
տներում, խմում երեկոյան թէյը, ուտում հացը  
և օրվայ ծանր աշխատալի գործից դադարած  
մտնում են անկողին: Յիւնեցիք հիւրասէր փողո-  
ւորք են, բայց դատողութիւնից զուրկ են և չու-  
նեն հաստատ գաղափար. նրանք երբէք չեն  
մտածում հասարակաց օգտի վրա:

Յիւնան ունի երկու քահանայ. մէկը արդէն ծեր  
և մի ոտքը գերեզմանում, իսկ միւսը դեռ ևս  
երիտասարդ և նոր ձեռնադրված: Երանք ինչ-  
պէս և փողովուրդը հազիւ թէ գիտեն հայերէն  
ուղիղ կարգալ և գրել... իսկ կանայք բացա-  
ռութիւն են կաղնում, ամբողջ գիւղում հազիւ  
թէ գտնվի ինչ կամ տասը կին, որ կարողա-  
նայ ճանաչել տաւեր և հայերէն կարգալ ու  
գրել իմանայ:

Օղբ բաւական մաքուր է և առողջարար: Ձրե  
կողմից Յիւնան բաւական հարուստ է. բացի  
աղբիւրներից, ունի մի բաւական մեծ գետ, որ  
զարնանը անձրեցի բարձրանալով մեծ վեհանգի  
է պատճառում գիւղացիներին, փչացնելով նրանց  
արտերը և այգիները, որոնք գետի երկու ափում  
ևս համարեա թէ մտած են ջրի մէջ: Եկեղեցին  
չինված է համարեա թէ գիւղի ծայրում ամուր,  
գեղեցիկ և ապշված քարից. եկեղեցու դռքը  
շատ գեղեցիկ է և գիւղում ունի բաւական մեծ  
կալուած: Տղայաց ուսումնարանը չինված է եկե-  
ղեցու բակում. մի փոքրիկ սենեակում, որ աղօտ  
ուսուցարան է մի քանի ուսանողներ, թողոտ  
նստարանների վրա նստած են աշակերտները  
առաջներին դրած «Մայրենի լեզու» իսկ զա-  
րաբաղի ուսուցիչը քանոնը ձեռքին պարա-  
պում է նրանց հետ (ի հարկէ միայն հայերէ-  
նով): Յիւնան ունի ևս մի օրիորդաց ուսումնա-  
րան. այդտեղ պարագայում է քահանայի կինը:

Տ.

### ՆԱՄԱԿ ՆԵՐՔԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ

21 մայիսի

Խիտ շատ են ազգի պակասութիւնները, բայց  
որքան էլ քաղմաթիւ լինէին դրանք, իւրաքան-  
չիւր սրտացաւ հայի պարտաւորութիւնն է խո-  
րագնին աչքով դիտել նրանց մի առ մի խո-

սել նրանց մասին բարեկամաբար, անկողմա-  
պաճ կերպով և առանց կրքերի, ու առաջար-  
կել զանազան միջոցներ յիշեալ արտաքինը ջն-  
ջելու համար: Յայտնի է որ մեր վաճառա-  
կանների մեծ մասը իրանց ծննդեան տե-  
ղից հեռու քաղաքներում են կատարում ա-  
ռուտութիւնը, և նրանք զանազան հանգամանքների  
հետեւ երբեմն ինչ կամ վեց և աւելի տարի-  
ներով չեն վերադառնում իրանց ընտանիքների  
մօտ: Այդ ժամանակամիջոցում վերջիններս ար-  
գեօք ինչ վիճակում են գտնվում: Նրանց կա-  
նայքը բացի այն որ ամուսինների երկար բացա-  
կայութեան պատճառով բնականապէս հալ ու  
մաշ են լինում մտքից և կարօտից, և երբեմն  
հարկադրված դրժում են ամուսնական հաւա-  
տարմութեանը:—Համարեա միշտ ծանրաբեռնած  
են լինում տնտեսական և ընտանեկան հոգսերի  
տակ: Իսկ մանուկները, ազգի այդ ապագայ  
յոյսի նշանները, ինչ են անում դրանք այդ մի-  
ջոցին, ո՞վ է կրթում նրանք, ո՞վ է սերմանում  
արդեօք նրանց մատաղ և դիւրնկալ սրտերի  
մէջ բարոյականութեան սկզբունքները, միթէ  
իրանց մայրերը: Վերջիններս, ինչպէս ասացինք,  
առաջինը տգիտութեան և երկրորդ ծանր հոգ-  
սերի պատճառով եթէ երազէին էլ անձեռնահաս  
կը լինէին կատարել այդ Ուրեմն կարելի է օգ-  
նականներ ունեն, մի որ և է ուսումնաւարտ  
հայ օրիորդ ունեն վարձած դաստիարակչուհու  
պաշտօնով, և այդ սուրբ պարտականութիւնը  
նրանց են յանձնած... Ի հարկէ, շատ ազնիւ և  
բարի գործ կը լինէր մեր բուրժուազական դասին  
այդպիսի հանգամանքներում հրախրել Թիֆլիսի  
և այլ տեղերի աղքատ և ուսումնաւարտ աշա-  
կերտահիւներին, մատակարարել նրանց չափաւոր  
ռոճիկ, միջոց տալ դաստիարակչուհու պատուա-  
ւոր պարագայունքով մի կողմից ապահովել իրան  
ապագան, որի մասին սակաւ են մտածում մեր  
օրիորդական դպրոցները, և միւս կողմից կրթե-  
լով մատաղահաս մանուկներին՝ պատրաստել  
նոյն իսկ իրանց մայրութեան վեհ միջոցներ...  
Եւ երբ այդ կերպով մեր ունեւոր դասի որ-  
դէք յանձնված կը լինէին յիշեալ մանկավար-  
ժուհիների խնամատարութեանը, որքան աս-  
տուածահաճոյ գործ կը լինէր նոյնպէս հարեա-  
նների աղքատ, որի մասին սակաւ են մտածում մեր  
ընդունել ձրիապէս այդ բարեկամական կրթա-  
րանների մէջ, որով հարուստ և աղքատ դասերի  
—երկու ապագայ հասարակութեան ներկայա-  
ցուցիչների մէջ մանկութենից հաստատվելով  
բարեկամական միութիւն, կը ջնջվէին ժամանա-  
կով այն որոշող խտրութիւնները, որոնք մեծա-  
մեծ չարիքների պատճառ են լինում իսկ մի և  
նոյն ժամանակ կը վերանային հասարակութեան  
միջոց շատ պակասութիւններ, որոնք առաջ են  
գալիս անկրթութիւնից: Այժմ տեսնենք թէ որ-  
քան են արդարանում մեր յոյսերը, որտեղ և  
ինչպէս են ընդունում յիշեալ մանուկները իրանց  
սկզբնական դաստիարակութիւնը: Երեխան որ  
դառնում է 3 տարեկան, կամ ինչպէս մեզա-  
նում ասվում է սկսում է տոտա տոտա անել՝ որ  
սեւեթն էլ պատկանէր նա անորոշ ժամանակով  
յանձնվում է մանկական պարտեզը—փողոցները  
և հրապարակները. այնտեղ նա գտնում է ձրիա-  
պէս դաստիարակվելու ամեն տեսակ միջոցներ:  
Ձրիակալն էլ էր, թուրք—անկիրթ իշապաններ,  
յիշցիներ մի անվերջ ծով, միով բանիւ օրինակներ  
և ոչ չոր խրատներ, այդպէս է պահանջում ժա-  
մանակակից պեղազօգիտ: Փոքրիկ օրինակների  
խումբը բոքիկ, գլխաբաց և ամբողջ սրբ պտուե-  
լով անարգել բոլոր հասարակաց տեղերը, ամեն  
մի ծակ ու մուկ հաւաքում են ճշդիւ բոլոր տե-  
սածները ու լսածները, տպաւորում են նրանց  
իրանց թարմ մտքի յիշողութեան մէջ, և այդ-  
պիսով պատրաստում են առատ գաղափարների  
պաշար ապագայ կեանքի գործունէութեան հա-  
մար... Բայց ինչպէս են դրանք հեռանում  
իրանց մայրերի մօտից, մայրերի՝ որոնք աչքերը  
բացած չը բացած ընդունում են թէ մօր և  
թէ հօր տեղ: Ահա ինչպէս: Հարուստ տանտի-  
կիները պատրաստի ունեն տանը մի կախա-  
ղական առարկայ, որով միտապէս զբաւում են

երկրաներին և ստիպում են հաղթանակել իրանց կամքին: Այդ հրապուրիչ առարկան է քաղցր-դէնը: Երբ երկխոս մի ուրիշ և է պատճառով լա-նիս է, կամ երբ մայրը կամենում է իր ընկերու-հներին խնայել տալ, կամ վերջապէս մի առան-ձին հաշիւ ունի վճարելու... քաղցրեղէնը հան-դէս է դուրս գալի և մանուկներին առաջնոր-դում է դէպի յիշեալ կրթարանները: Յայտնի է, որ շաքարեղէնի չափաւոր գործածութիւնը օգ-տակար է մանուկանց կերակուրից յետոյ, երբ նա ներգործում է իբրեւ հեշտ մարտադրութեան միջոց: Բայց չափազանց գործածութիւնը ունի իր վնասակար հետեանքները: Կնքն շաքարը իր ճարպանման և կրային բաղադրութեամբ, տա-քացնող և այրող յատկութեամբ իւրաքանչիւր օր մուտ գործելով մանուկների փափուկ կազմ-վածքի մէջ, երբ վերջինս պէտք ունի պնդանա-լու և զօրեղանալու հետզհետէ, այնպիսի սոսկալի խանգարմունք է պատճառում, որ թէ մարմնի վայելուչ շինուածքը և թէ ջրային սխտեմը զրկելով իրանց կանոնաւոր զարգացումից՝ ա-ռաջացնում են շատ տխուր հետեանքներ: Ութ տարեկան ընթացքում դիտելով վերև յիշվածը և յետոյ ուսումնարանները երթնելով մինչև 20 երեխաների վրա, որոնց համար քաղցրեղէնի գործածութիւնը մի մոլութիւն էր դարձել մենք փորձով համոզվեցանք թէ մինչև որ ատոման մեղանշած էին ծնողները որոշող վերաբերու-թեամբ: Այդ քաղցրամուր և շաքարագոյ խղճա-լիները յաճախ ենթարկվում էին տեսակ տեսակ հիւանդութիւնների, ինչպէս՝ ստամոքսային և նրա կապակից աչքացալի, բերանի և ընդերքների, հարկիքի ու ծնոտի անդօրութեան և այլն: Սը բանցից յետոյ նրանց ատամները շատ անգամ փռում էին, սկանում և փշուկելով թափվում, զուգարեք և երեսի վրա դանաղան խոցեր և խուլքեր լայն ընթացում և մարմնի մէջ ընդհանուր թուլութիւն և գունատութիւն էին թաղարորում: Այժմ թող ընթերցողը եղբակացնէ թէ ինչ-պիսի աղաքայ է սպասում այդպիսիներին: Թնչ կարելի է յուսալ դրանցից եթէ ոչ ազգի գոնէ այն հասարակութեան կամ ծնողների համար, որոնց պատկանում են: Վերջացնելով մեր խօսքը աւելորդ չենք համարում յիշել թէ որքան օգ-տաւէտ է լինելը որ մեր օրնորդական ուսումնա-րաններում միւսների թուով դասախօսելի նաև քիմիայի սկզբունքները, գոնէ այնքան, որքան հարկաւոր է տնտեսականութեանը, այսինքն ծանօթացնելին օրնորդներին տան մէջ ծախվող նիւթերի յատկութիւնների, օգտաւէտութեան կամ վնասակարութեան և վերջապէս նրանց գործածելու եղանակի և չափի մասին: Եւ որով-հետև հայ տիկիները մեծ յարմարութիւն են ցոյց տալիս տնտեսական կառավարութեան մէջ, մանաւանդ երբ նրանց վզին է թողված միայն այդ պարտաւորութիւնը, մեծ լայն կը սիրէին ընտանեկան առողջ կեցութեան վրա փորձուց ծանօթանալով յիշեալ առարկայի հետ: Բայց քանի որ դուրի ենք այդ և այդպիսի օգ-տաւէտ անհրաժեշտութիւններից, մենք խօսելով միշտ իրական սեռի բարեւը կրթութեան վրա, ստիպված ենք կրկնել երեւելի գերմանացի դոկ-տոր Բօկի խօսքերը. «տուէք մեզ լաւագոյն մայրեր, և մենք կունենանք լաւագոյն որդի-ներ»:

Եփրեմ Կաթնեանց

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

«Մշակ» № 91-ի մէջ տպած խմբագրին ուղղած նամակի մէջ մտել են հետեւեալ սխալները: Խո-սա Թեմիսեան նուիրել է 3 ր և ոչ թէ մի բուր-նայէս տպված էր: Բուրդան Մեղիկեանի տեղ պէտք է լինէր Բուրդան Լիւնիով:

Հինգաբլթի յունիսի 8-ին թիֆլիսի հայ ու-սանոցները պ. Տէր-Կաթնեանի մասնակցու-թեամբ մի ներկայացումն տուին, յօգուտ վանի ձրիավարժ վարժարանի: Ներկայացումն առհա-սարակ շատ լաւ գնաց, ամբողջութիւնը այնքան լաւ էր, որ մենք այդքանը մեր գերասաններից էլ չէինք սպասում: Գերմանական կուրբի դահ-լիճը լիքն էր, շատ քիչ տոմսակներ էին մնա-ցել չը ծախված:

ՁԱՒԱԼ-ՕՂԱՂԻՑ մեզ հաղորդում են, որ ջըր-ջակայ դիւղերից մէկում հնդեղ է եկել և բաւա-կան վնասներ է տուել: Գիւղացիք յոյս ունեն, որ այս տարի լաւ հունձ կունենան:

ԱԼԷԲՍԱՆ ԳԻՐԱՊՈԼԻՑ մեզ հաղորդում են, որ հնդեղից խնդրածները 25 մարդ են:

### ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՕԼՏԵՐԻ ՏԱՐԵԿԱՐՁԸ

Կղերական կուսակցութիւնը որչափ էլ աշ-խատեցաւ Վոլտերի, այդ մեծ մարդի յիշա-տակը անպատուելի չը կարողացաւ ազդել: Վոլտերի տարեգրքը, մայիսի 30-ին, հան-դիսով կատարվեցաւ Փարիզում երկու տեղ, Գէտէի (Gaité) թատրոնում և Միլէրի ցեր-կում: Կղերական կուսակցութեան կանխածնե-րի հափառակ, այն օր ոչ մէկ անկարգութիւն չը պատահեցաւ: Փարիզի ժողովուրդը օրից օր աւելի ցոյց է տալիս աշխարհին թէ ինքն արժանի է վայելել հանրապետութեան տված ազատութիւնները: Փրանսիայի նահանգներում անգամ կատարել են Վոլտերի տարեգրքի հանդէսը, մասնաւորապէս Լիւն, Մարսէյ, Ամիան քաղաքներում շատ շքեղ հանդէսներ են եղել: Ոչ մէկ անկարգութիւն չէ պատա-հել և ոչ մէկ տեղ: Պապը՝ մայիսի 31-ին կա-թօյի ընկերութիւններից ուղարկված պատ-գամաւորները ընդունած ժամանակ, ցաւ է յայտնել որ հրապարակական պատիւներ կը լինեն Վոլտերին, մէկ կաթօյից ազգի մէջ Բա-րեաղբապէս, ասել է պապը, նոյն ազգի մէջ զօրաւոր ձայներ բարձրացել են դատաւար-տելու համար նրանց: Արեւծը պապի այդ նկատողութիւնը վերաբերվում է Փրանսիային և Դիւպանլու Եպիսկոպոսին և իր օգնական-ներին: Բայց Բոսալայում էլ Վոլտերի տարե-գրքը կատարել են նոյնպէս շքեղ հանդիսով: Երկու շատ երեւելի մարդիկ մասնակցել են եղել: Հռոմում, Ապրիլի թատրոնում ներկայացրել են Վոլտերի Ձայնի ողբերգութիւնը և նրա արձանը դարձրել են պատկերով: Միլա-նում, Բօլիո պատգամաւորը առաջարկել է շնորհակալութեան հետագիւր ուղարկել Փա-րիզի մասնաժողովին: Նոյնպէս Պարիզի պրօֆէսորը Բօլոնիում:

Հետաքրքրական է այն հանդիսի նկարա-գրութիւնը որ Փարիզի ժողովուրդը կատարեց տօնելու համար Վոլտերի յիշատակը, այն մեծ մարդի, որի համար ասու Գամբէտա իր հրապարակախօսութեան մէջ թէ՛ մեծ մտքի և փիլիսոփայութեան ճշմարիտ թաղաւորն էր: Եւ ասան և ութերորդ դարում, պէտք է ուրախութեան արտահայտելով ծափահարել Վոլտերի անունի համար... պէտք է որջանել նրան, պէտք է զննել նրան մեր ազգային բու-րը փառքերի մէջ տեղ իր յարմար տեղում: Եւ այնչափ ազատամիտ եմ գգում ինձ, ասաց Գամբէտան, որ կարող եմ կրօնական յարգան-քով պատուել ժան Լա Լօրրէնին և մի և նոյն ժամանակ հիւանդ Վոլտերի վրա և աշա-կերտել նրան:

Վաղ առաւօտ, Փարիզի զանազան դպրոց-ների ուսանողները պէտք է հաւաքվէին Պան-թէօնի հրապարակում, այնտեղից խմբովին գնալու և Վոլտերի արձանին մէջ պսակ նուի-րելու: Համար: Բայց այդ հրապարակային ցոյ-ցը արգելված լինելով, ուսանողները որոշել են մէկ պսակ նուիրել Վիկտոր Հիւգօյին Գէտէյի թատրոնում: Մեծ բազմութիւն լրկել է թա-տրոնի շրջականերում ուր բլաւելով ծախում էին Վոլտերի, Վիկտոր Հիւգօյի, Գամբէտայի լուսանկար պատկերները: Գլխից ամեն խա-նութներ փակված էին և տներից կախված եռագոյն դրօշակները ծածանվում էին: Բազ-մութիւնը այնչափ շատ է եղել որ մեծ մասը չէ կարողացել թատրոն մտնել, տեղ չը գտնե-լով նախ վարժարանների ուսանողները եկել են խմբովին, յետոյ Վիկտոր Հիւգօ, Էմիլի Ժի-րարդէն, Նօտէն Պէլլուան և այլ ամենայայտնի գրագէտներ որոնց եկած ժամանակ բազմու-թիւնը ծափահարութիւններով ընդունել է: Թատրոնի մէջ Վոլտերի կիսարձանը դրված է եղել, բնական ծաղկներով շատ շքեղ զար-դարկած: Տիկիները և օրնորդներ լրկել են բոլոր օթեակներում (լոժ): Գրեթէ երկու

ժամին, աստիկ ծափահարութիւններով ըս-կել են բլաւել Վիկտոր Հիւգօ, Էմիլի Ժիւգօ, Կեցցէ հանրապետութիւն: Այդ նշանակում է թէ անուանի բանաստեղծը մտել է թատ-րոնի ներս: Վիկտոր Հիւգօ նստել է նախա-գահի աթոռը, Վոլտերի կիսարձանի առջեւ: Նրա երկու կողմերը նստել են պ. պ. Սպիլլէր և Դէշանէլ: Հանդէսը սկսվել է Սպիլլէրի ա-տենախօսութեամբ: Նստեցում և պարզ խօս-քերով յայտնել է հանդիսի նպատակը, թըշ-նամիների արած հախառակութիւնները և յարգական խօսքեր Վիկտոր Հիւգօյի և Վոլ-տերի վերաբերութեամբ: Նրան յարգել է պ. Դէշանէլ անուանի հրապարակախօսը որ Վոլտերի գրութեանցից մի քանի հատուած-ներ կարդալով ցոյց է տվել այդ մեծ գրա-դէտի, կամ լաւ ևս այդ մեծ մարդու գոր-ծունեութիւնը, որ առաքելալ հոնքիսացաւ կրօնական ներողամտութեան, առաջնորդ 89-ի այն մեծ յեղափոխութեան որ չը պէտք էր ինքն աչքով տեսնել, բայց գուշակած էր և որ պատրաստելու համար ոչ ոք այնչափ աշխա-տած չէր որչափ ինքն: Դէշանէլը յետոյ, Վիկ-տոր Հիւգօն ոտի է կանգնել: Արաշի ամեն կողմից ծափահարութիւններ սկսել են գո-ռալ: Եւ խօսքը կարդացած ժամանակ շատ անգամ ընդմիջվել է աստիկ ծափահարու-թիւնների և կեցցէների ձայներով: Մենք մեր ընթերցողներին ներկայացնում ենք միայն երկու հատուած այն բազմութիւն փեմ խօս-քերից որոնք մեծ ազդեցութիւն ունեցան հանրապետական վրա: Մեր այն է ուր յիշում է Կալաների և Լաբարների կրօնական զը-պարտութիւններով դատաւարաւորել և սոս-կալի տանջանքներ կրելը և թէ Վոլտեր միայն պատերազմ հրապարակեց այդ բարբարոսական հին սովորութիւնների դէմ: Նրկարդէն այն է ուր դատաւարաւորում է պատերազմը և փա-ռաւորում է խաղաղութիւնը որով վերջաց-նում է իր խօսքը: Ունիւղիւնները բոլորովին ողեւորված, երկարատե օվաղիներ են արել Վիկտոր Հիւգօյին: Պ. Սպիլլէր մի քանի նոր հեռագիրներ կարդալով հանդէսը վերջա-ցրել է: Այդ հեռագիրները զանազան քաղաք-ներից ստացվել են անուանի բանաստեղծի ատենախօսած ժամանակ:

Մի յերթի ցերկում կատարված հանդէսն էլ համառօտ նկարագրելուց յետոյ, մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին Վիկտոր Հիւգօյի խօսքերից յիշեալ երկու հատուած-ների հետ: Այդպէս հանդիսին նախադահել էր սենատոր պ. Լօրան Պիշա. նրա երկու կող-մեր նստել են Փարիզի քաղաքապետական ժողովի և Սէնի ընդհանուր ժողովի նա-խադահները: Ընդարձակ սրահը բոլորովին լրկված է եղել բազմութեամբ: Զանազան տե-ղեր կանգնեցրել են եռագոյն դրօշակներ որոնց վրա սկիւղէն տառերով գրված էին այն քա-ղաքների անունները որոնց քաղաքապետա-կան ժողովների կամ քաղաքացիների կողմից ուղարկվել էին պատգամաւորութիւններ Վոլ-տերի հանդէսին մասնակցելու: Համար: Բու-սոյի, ԳՆլամբէրի, Կօնդօրի, ԳՆլամբի և Հէլլէթիտուսի անուններ գրված էին բարձր տեղերում: Ոսկեզօծ մի արձան գրված էր որ ներկայացնում էր մի կին, ձեռքումը բռնած մի ոսկեզօծ մեծ շրջանակ (կարտուշ) որի վրա կարդացվում էր՝ Արդարաւէր Վօլ-տերին: Մի այլ ոսկեզօծ շրջանակի վրա էլ գրված է եղել Մարդու իրաւունքները: Վոլտերի կիսարձանի ետեւ գրված էին ոսկե-զօծ երկու մեծ արձաններ որոնցից մինը ներ-կայացնում էր մի Գօլաւաի (հին ֆրանսիացի) տապալումը զինված և միւսը նոր մշակներից մէկը մուրճը ձեռքին: Բացի Վոլտերի կիսար-ձանից, գրված է եղել նաև ամբողջ արձանը 3 մետր բարձր, կարմիր չուխայով ծածկված: Արձանը այնպէս շինված է որ մէկ վերաբիւ-ծածկված է Վոլտերի ուսերի վրա և երկու կողմերից վեր վերցված է ձախ ձեռքով որ բռնած է կրօնի ծախված մի թուղթ և կըր-

թնում է մի գաւազանի վրա: Այդ ձեռքը որ ձախ ձեռքի վրա գրվելով խաչաձև կազմած է, մի գրիչ բռնած է: Երբ հանդէսը բաց-ված ժամանակ, կարմիր ծածկոցը վեր են առել և արձանը երեւացել է, բոլոր բազմու-թիւնը ոտի կանգնած միաձայն բլաւել է Վիկտոր Հանրապետութիւն: Մի քանի տես-նախօսութիւններ եղել են: Մասնաժողովի ան-դամներից մինը առաջարկել է որ հանգստա-կութիւն լինի Փրանսիայի քաղաքային վէճերի և երկպառակութիւնների զոհ եղողների ըն-տանիքների համար: Ու թէ ձեռք քաղաքական զգացումին, ասել է նա իր ատենախօսու-թեան մէջ, այլ ձեռք սրտին դիմում եմ: Մտածեցէք անամուսին կանանց, անհայր երեխաներին վրա: Վթութիւն եմ խնդրում կանանց և երեխաների համար և ներողու-թիւն հայրերի քաղաքական յանցանքների համար: Վիկտոր Հիւգօյի ներողութիւնը բլաւել են այնտեղից ուր բարձրաստիճան անձինք նս-տել էին և խոյնի սկսվել է փող հաւաքել: Այդ նպատակի համար նախադահը կար-դացել է զանազան հեռագիրներ որոնք ստաց-ված են եղել Հօլանդիայից, Բուսիայից և Բօրգոյից:

Հանդէսը վերջացել է այս արարողութե-նով: Բոլոր դրօշակները հաւաքվել են սրահի մէջտեղ: Ուսանողների դրօշակը որի վրա ու-սանողական կարմիր զինարկը կար, գրվել է Վոլտերի արձանի առջեւ և բոլոր ուսանող-ները կարգով անց են կացել արձանի առջեւից, դուրս խմբարհեցնելով Վոլտերին: Այդ միջո-ցին, նուազածուների խումբերը աճել են մայրսէյլը կեանակը որ հանդիսականների մէկ մասը երգել է: Ուսանողների այդ անցքը շատ նկարչական (pittoresque) մի տեսարան է ներկայացրել և ծափահարութիւնների և կեցցէների աղաղակներ գոռացել են ամեն կողմից:

Ահա Վիկտոր Հիւգօյի փեմ խօսքերից այն երկու հատուածները միայն որոնք վերև յիշեցինք և որոնք ժողովուրդը աստիկ ծա-փահարութիւններով ընդունել էր:

(Կը շարունակվի)

### ՆԱՍՏԱԿ ՖԻՆԱՆՍԱՅԻՑ

Փարիզ, 26 մայիսի

Ոչ մի երկիր այնքան հարուստ չէ, որքան Եւրոպան: Եւ խօսում եմ այստեղ նիւթական, տնտեսական հարստութեան մասին: Եւ զարմա-նալի մի բան. ոչ մի երկիր այնքան խնայող չէ, որքան նոյն իսկ այդ հարուստ Եւրոպան. Ուր-քան Եւրոպայի աշխատող է, բանող, գործող, որքան եւրոպացիք հասկացողութիւն ունեն մի-ջոցներ գտնելու, հարստութիւններ դիզելու, որ-քան նոյն մէջ գործունեութեան միտքն է զար-գացած, նոյնքան էլ զարգացած է նրանց մէջ նաև խնայողական միտքը: Բայց այս խնայողու-թիւնը, որի վրա այստեղ խօսք կայ, վերաբե-րում է աւելի չունեցող քաղաքացիներին: Մի քանի ժամանակ առաջ շրջելով համալսարանային հանդիսի լաբիրինթոսում, եւ միանգամայն յոգ-նած էի ֆրանսիական և օտարների բաժիննե-րում բերապալով աւարական տեսնելուց: Բայց մի սենեակի անկիւնը ինձ մանաւանդ հետաքր-քում էր. այստեղ քաջ էին արած մի քանի ցուցակներ, նկարներ, գրքեր, լիթէ նայէք կը տեսնէք որ խօսքը միլիոնների, 100 այս, մինչև անգամ 1000 միլիոնների վրա էր: Առաջին ան-գամ մարդ կը կարծէր թէ այդ ցուցակները, թւերը մեծ բանկիրների հաշիւներ են և այլն: Եթէ փոքր ինչ մօտիկ քննէիք, կը համոզվէիք, որ դժբա, այդ հաշիւները հարուստների հա-շիւներից շատ հեռու են: Գրանք ոչ այլ ինչ էին, եթէ ոչ կօպիկների հաշիւներ որոնց մի քանի տարվա գումարը յանդարձ մի միլիարդի է հա-սել: Խօսքս այսպէս անուանված վնասողական արկղերին՝ մասին է: Ընթերցողը արդէն զգա-

\*) Մենք խառնափում ենք «չունեցող դատ» բառը գործածելուց, առաջինը, որովհետև այդ-ման հարաբարութեան մէջ այդպիսի մի դատ չը կայ, երկրորդ, որովհետև այդ բառը վերաւո-րական է:



**Յ Ս Յ Տ Ս Ր Ս Ռ Ն Ն**

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆԻՍ ԳՏՆԱՌՈՂ ԱՆԳ-  
ԼԵԱՆԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ժամկետով են՝ ԿԱՐՏՈ-  
ԼԵԱՆ Տեղով և փոշի տարախոսիկ Տիսան-  
գույթիներին գէտ 1 1/2 ը., ԽՆԱՅԻ ԻՒՂ  
1 1/4 ը., ցնարատ մանկեղայն 2 ը., ՐՈՄ  
ԿՈՆԵՍԿ, ՊՐՏՏՎԵՑ, ԽԵՐԵՍ և անցկական  
օղե 1 1/2 ը., ճանապարհի ամաններ գլխին  
3 ը., Թէյի գրաններ (չեն սեանում) 1 1/2  
ը., Բարձր, ճանապարհի գանակներ 80  
կ., ճանապարհի ֆիլտրներ 4 կ., մատիտ-  
ներ հատը 1 կգ., երկաթի գրիներ 18  
հատը 5 կ., անգլեր 1000 հատը 80 կ.,  
ճածկոցներ, մանկական շորեր և չեթրջող  
վերարկներ 4 ը., Բարձր, գլխարկներ  
և ժիլետներ 75 կ., Բարձր, կտաւ 10 ը.  
և Բարձր, տրիկո 1 ը. և Բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ  
60 կ. և Բարձր, բամազէի 1 ը. արշեր,  
շղթաներ (Նիսինայի ուղուց) 50 կ. մինչև 3  
ը.: Մի և նոյն կանոններով շուտով կը ստաց-  
վեն ՄԱՀԱՍԱԼՆԵՐ 6 ը. և Բարձր, բիսկվիտ-  
ներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐԱԿԱՆԵՐՆԵՐՈՂ  
անուանված մի գեղ, և այլն:

9—20

**ՄԱԺԵՐԻ ՏԱԿԻՅ ԳՈՐԱ ԵԿԱՆ ՎՍԿԵՆՆԵՐ**

Երիտանեական հաւատոյ Հայաստանեայց եկե-  
ղեցոյ անուանով կրօնագիտութեան ձոր դա-  
տագիրքը Աշխատասիրոյն և Կովկասեան հա-  
յերին քաջածանօթ նախկին Եկեղեցեան վե-  
րատեսչ, իսկ այժմ Գորուայ արքեպիսկոս  
ուսուցչական կարգի կրօնաւոյց արժ. Տ.  
Ստեփանոս Տէր. Ստեփանեան. Գաղափար  
Թարգմանութեան կազմած և ուսուցչական  
գրող Տ. Ստեփանեանի սկզբնական ձեռնարկից և  
բովանդակում է իր մէջ կարեւոր գիտելիքներ  
հին և նոր կապիտալից, բազմաթիւ տրոթ-  
քներ, քրիստոնէական վարդապետութեան  
գլխաւոր դասանկերը, քրիս. սկիզբը և տա-  
րածումը Հայաստանում. եկեղեցու եօթն խոր-  
հուրդները, հաւատոյ հանգանակը և այլն:  
Դասագիրքը զարգարած է 25 հատ ամե-  
նագրեցիկ խոշոր պատկերներով հին և նոր  
կապիտալից և նշանակված է իբրեւ ձեռնարկ  
մեր ժողովրդական տարրական ուսումնարան-  
ների համար: Գինն է 50 կոպէկ. դուրսը  
աւտորներին 45 կոպէկ: Մակմում է բացա-  
ռապէս Թիֆլիսի Եկեղեցական գրքատնա-  
նոցում:

**ТИФЛИССКИЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ**  
**ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ**

Ճամբէնայա փողոցի վրա Յունաց եկեղեցու դիմաց տուն՝ № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ դարձա-  
րանում դրածվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ  
ԿԱՇԻՆԵՐ կոշիկներ, Թամբերի, կաշեքի արուեստների համար և նոյնպէս հում կաշիներ:  
Մեծ քանակութեամբ վաճառելու կատարվում է գործարանի կանտորայում, որտեղ  
ընդունվում են և պատուէր՝ Մաս մաս ծախվում է Սիւնի մայր եկեղեցու դիմաց  
գտնվող մագազինում:

25—23 (2)

**ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ** տարած գիմ-  
նագիական կուրսը պատրաստում է երկաթ-  
ների ամեն տեսակ ուսումնարանների հա-  
մար: Հասցեն կարելի է իմանալ ԿԵՆՏՐՈՆԱ-  
ԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՍԱՆՈՅՈՒՄ, Պ. ԱՐԾՐՈՒՆՈՒ  
ԳԱԼԵՐԵՆԻՍ:

1—2

**ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ** ՀԱՅ-ՔԱՀԱՆԱՅ, որ իր ռե-  
սուրսը ստացել է Ներսիսեան Կարգում, ուր  
և ունի ուսուցչի պաշտօն, դիմում ամառա-  
նոց ԿՈՅՈՐ ԿՏԱՅ ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԴԱՍԵՐ,  
ցանկացողները կարող են հարցնել Կոշորի  
հայոց եկեղեցու սենեակներում:

1—3

**МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ**  
**ПО-ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ**  
**ВЪ ГАЛЕРЕѢ АРЦРУНИ.**  
**ԱՐԾՐԱ ՆՈՒ ԳԱԼԵՐԵՆԻՍ**  
**ՀԷՏ ԷՃԵՆ ԳՆԵՐՈՂ, ՎԵՐՁՈՂ, ԵՆ ՏԻՎՈՒՄ**  
**ԽԱՆՈՒԹՆԵՐԸ**



Только что возвратившись изъ-за границы привезъ съ собою большой выборъ разныхъ карманныхъ золотыхъ и серебряныхъ ЧАСОВЪ, ремонтныхъ различныхъ системъ, какъ-то, ренитивныхъ (Rèpétition à minutes) съ календарями (à quantième) докторскіе часы (Secondes indépendantes) и т. д. Выборъ сдѣланъ мною у лучшихъ женевскихъ фабрикъ, изъ той самой партіи которая была отправлена на Парижскую всемирную выставку; за вѣрность хода часовъ магазинъ гарантируетъ.

Большой выборъ разныхъ золотыхъ, бриллантовыхъ и серебрян. вещей очень изящная работа; не смотря на курсъ, цѣны удѣренныя.

Магазинъ С. КАЦѢ

Дворцовая улица № 3.

(332) 5-4.

**КОНТОРА ГАЛЕРЕИ АРЦРУНИ**  
**ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ**  
**ДНЕЙ** отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

**ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆԻՍԻ ԳՐԱԿԱՆԵՐԸ**  
**ԲԷՅ Է ԼՐԵՆ ՕՐ ԼՈՒՍՕՏԵԼՆ 9 Ժամից մինչև 2 Ժամ**  
**կեսորից յետոյ բացի ԿԻՔԷԿԻ օրերից:**

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՍԱՆՈՅՈՒՄ ԱՐ-  
ՇՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆԻՍԻ, ծախվում են ի միջի  
այլոց հետևեալ հայերէն նոր գրքերը.

1. Փոքրիկ Ժողովրդական Երբեքնա-  
րան գիւղական ուսումնարանների համար, գինն  
է 5 կոպ. դուրսը 4 կոպ. Կրօնական գիւղական կը լինի.
2. Գեղորդ Բարխուդարեանի նոր Թարգմանու-  
թիւնները Դօն Կարլոս, Դաթիւս, Իմաս-  
տուն և Օրէնքներ Կոյս, Իւրաքանչիւրը  
60-ական կոպ.
3. Դօն-Կարլոս Լամանցիցի Թարգ. 8.  
Առաքելեանի, գինն է 70 կոպ.
4. Լեոնի վիշապ. Շահ-Աղիլեանի, գինն է  
1 ը. 25 կ. ճանապարհի ծախսը գնողների վրա է.

Ցանկանում են ունենալ ՄԻ ՈՍՈՒՅԻՉ, որ  
պարտաւր 9 տարեկան երեխայի հետ և նրան  
ընայական գիմնական տաճին զատատան  
համար պատրաստելու: Հասցեն կարելի է  
իմանալ մշակի խմբագրատանը:

1—2

ԹԻՖԼԻՍԻ ԳԱՂԱՔԱՆԵՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ  
յայտնում է, որ իր ներկայութեամբ յունկի  
11-ին աճուրդ կը լինի քաղաքական հողի  
մի մասը ծախելու համար: Հողը գտնվում է  
երկրորդ բաժնի 15-դ մասում, Կախեթի  
փողոցի վրա Այդ հողը մեծութեամբ 251  
քառ. սաժէն է և պիտանի է շինութեան  
համար:

1—3

ԿԻՐ Կարել է ստանալ ամեն ժամանակ  
Կուկիայում, Նիկոլայեւի փողոցի վրա Գ. Լ.  
Պատկովի և ընկ. սպիտակ պահածոն կից  
Տուն № 44:

1—3

| ԹԻՖԼԻՍԻ 10.                |      | Տ Ե Ղ Ե Մ Ա Յ Ո Ց 8 |                           | ԹԻՖԼԻՍ 1878.                |                                 |
|----------------------------|------|---------------------|---------------------------|-----------------------------|---------------------------------|
| ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՍԱՆՈՅ          | Բ.   | Կ.                  | ՀԵՐԱԳԻՐ                   | ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-             | ՓՈՍՏ                            |
| (Թուինի 9-ին)              |      |                     | Բ.                        | ԹԻՖԼԻՍ                      | ԲԺՇԿԱՆՈՑ                        |
| Ու Կիւն (պոլուսկիւրալ)     | 8    | 30                  | Կովկասի և Ան-             | Թիֆլիսից մինչև Փոթի         | Ամեն տեսակ թէ նա-               |
| Հին 82-պր. մ. արծ. 1000 մ. | 1550 | —                   | դրովկասի քա-              | (ճանապարհորդների գնացքը) 9  | մանր և մեծ քանակութեամբ 9 ժամից |
| Հին 20 4. 72 պր. 1000 մ.   | 1310 | —                   | ղաքները                   | ժամին 21 լուսեղ առաւօտեան   | մինչև 1 կէսօրից յետոյ:          |
| Վիգրիչի 50/0 առաջի փո-     | 233  | —                   | Ուսուցչական               | Գինն Միւսկալով օ (կրօն)     | Երկուշաբթի. վերջի-              |
| խառնութեան տոմ. 100        | 235  | —                   | Աւարտի                    | Գինն Միւսկալով օ (կրօն)     | կէս և Գորալիչի ներքին           |
| Երկրորդ 50/0 վիգրիչի       | 235  | —                   | Անգլիա                    | Գինն Միւսկալով օ (կրօն)     | հիւանդութիւններ, Բուշա-         |
| Կարեւոր կուրսը 237         | 100  | —                   | Գերմանիա                  | Գինն Միւսկալով օ (կրօն)     | րեանց վարդապետական և            |
| Լեոնի վիշապ. Օրէնքայի      | 10   | 67                  | Ֆրանսիա                   | Գինն Միւսկալով օ (կրօն)     | ակադեմիականներ:                 |
| վիշապի կուրսը 112 զր.      | 121  | —                   |                           |                             | Երբեքնալ Վերջի վերջի            |
| Կարեւոր բարձր              | 5    | 90                  | ԱՆԴՐԿՈՂ ԿԱՍԵԱՆ ՄԱՆ-       | Թիֆլիսից                    | ներքին 5. Բէյի ալքի 5.          |
| Աւարտական բանկի ակ-        | 300  | —                   | ԿԱՐԱՐՁԱՆԱՆ ԴԱՐՈՑ          | Գինն                        | 9—11 ժամ, Ա. Բախու-             |
| ցիան 200 մ.                |      |                     | (վերջի վրա № 38)          | Միւսկալով օ                 | տով կանանց, երեխաների           |
| Փոթի Թիֆլիսեան երկա-       | 125  | —                   |                           | Բիւն                        | 4. Բանկաբարձութեան:             |
| թուղու ակցիան 125 մ.       |      |                     |                           | Փոթի                        | Զորեքնալ Վերջի վերջի            |
| Շաքարը բրդի                | 8    | —                   | Ծնողականների ընդ ու-      |                             | չէլ ներքին 5. Բախու-            |
| միւս տեսակը                | 7    | 80                  | ն եւ լոթիւնը ցերեկայ      |                             | կործարանի և ջգային:             |
| շաքարաւոր                  | 6    | —                   | և դիւրեւայ ամեն ժամա-     |                             | Հին գալաթի. վերջի-              |
| մաքանիւր                   | 6    | 50                  | նակ, օրը 50 կոպէկ վար-    | Փոթի                        | չէլ ներքին 5. Գալիսո-           |
| մաքար վարած                | 12   | —                   | ձով իսկ չբաւորներին ան-   | Միւսկալով օ                 | սկի կանանց և մանկա-             |
| Բամբակը երկանու Ա-         | 8    | 50                  | վարձ, Աւանձին սենեակ-     | Գինն                        | բարձրութեան 9—10 ժամ,           |
| մերկայի սերմից             | 7    | 50                  | ներում ամիւր 30—50        | Գինն                        | Բախու վերջի վերջի և կա-         |
| Ան տեսակը հին սերմից       | 8    | —                   | րուր, Կանանց հի-          | Գինն                        | չու 5. Օրբէլտատատան-            |
| Բուրդը Թուր                | 8    | —                   | ւան գոթիւնը և ներքին      | Գինն                        | ցաւեր:                          |
| Թարաքամի                   | 4    | 20                  | ընդհանուր սենեակում 18    |                             | Ուրբաթ. վերջի վերջի             |
| Ալիւր Երաքալու             | 1    | 40                  | րուր, իսկ մասնաւոր սե-    | Թիֆլիսից գալիս և առաջին գը- | ներքին 5. Բախուտով ման-         |
| Երեւան                     | —    | 90                  | նեակներում 30 րուր ամ-    | նացը երեկոյեան 9 ժ. 31 ր.   | կաբարձութեան, կանանց և          |
| Գարին                      | 13   | —                   | սական.                    | Երկրորդը առաւօտեան 7 ժ.     | հիւանդների 5. Բուշաբեանց        |
| Մեծ քանակութիւն (сгар.)    | 180  | —                   | Երբեքնալ և Երեւանի ըն-    | 56 ր.                       | սիֆիլիտական և միջային           |
| Մեծ քանակութիւն (сгар.)    | 100  | —                   | դունդութիւնը ամեն օր,     | Տեղի վրա գինը Թիֆլիսից      | գործարանների 5.                 |
| Կոկոնը Կուկայ (բուծ.)      | 45   | —                   | բացի կիրակի օրերից, 9 1/2 | Գինն                        | Շաքար. վերջի վերջի              |
| Ֆրիզոնը (լաւոր) Արու-      | 55   | —                   | մինչև 11 ժամ առաւ-        | Գինն                        | քին 5. Բէյի ալքի 5.             |
| րեանց                      | 27   | —                   | տեան, Բժշկապետ Անա-       | Սուրբաթ                     | Բախու կործարանի և ջգա-          |
| Կոֆէն մօկի                 | 22   | —                   | նով:                      | Գինն                        | յին հիւանդութիւններ:            |
| Լիւանի                     | 22   | —                   |                           | Փոթի                        |                                 |
| մարտիկայինը                | 20   | —                   |                           |                             |                                 |